11 տաունս վասն փրկութե հո-
12 գո իմո եւ արեւշատութեն
13 տէրանց մերոց Զաքարի եւ Իւ-
14 անի եւ էառ ի հիւրատունս դԿ-
15 ոշաձորին այգին ու գՈռն-
16 ագոմուց կէսն եւ կանգնեցի
17 զխաչս։ Արդ, որ զմեր ըզորդա-
18 ծն խափանէ՝ դատի ի աէ, եւ կաւ-
19 արինչքն ուրհնեցին ի Քսէ,
20 ամէն։

Ծանոթություն.— *Զալ թվականը կարդացել է ՈԶ—1157, որ չի համապատասխանում Թամարի թագավորության տարիներին։ Կոստանյանցը վիմական տարեգրքում ենթադրաբար թվականն ուղղել և դարձրել է ՈԼԶ—1187։*

Տարընթերցում.— *15—16-րդ տողերում* Ոռնագոմուց *տեղանունը* Զալ *կարդացել է* ուզունագոմուց: *Ճիշտ ձևը՝* Ոռնակայ գոմ:

176. Գյուղի հս աե կողմում, «Մանուչարանց» խաչքարի վրա

(Լուս. № 96)

Նկ. 96. Արձ. № 176։

Հ ՉԱ Մ 1252

Հրատարակվում է առաջին անգամ

1 Թվլ. ՉԱ։ Շնորհիւն եւ ողորմու-
թեամբն Այ կանգնեցաւ խաչս
առաջնորդութբ Աւէտիս վարդ-
2 ապետի, բարէխաւս ինձ՝ Գրիգորի
3 եւ եղբաւր իմ Թոմաի եւ Ովանիսի
եւ սն-
4 ուցողին մերո Դւաթի։ Որք երկր-
5 պագէք յիշէցէք ի Քս եւ Ած զ-
6 ձեզ յիշեսցէ։

Ծանոթություն.— *Առաջին տողը գրված է խաչի շրջանակի վրա, կամարաձևության մեջ խոշոր գրերով, իսկ մնացածը՝ խաչքարի ստորին մասում, համեմատաբար մանր գրերով։*